

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

**Մասնագիտությունը**

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

**Մոդուլի անվանումը՝**

«Վարսավիրական գործիքներով եվ սարքավորումներով աշխատելու  
սկզբնական հմտություններ »

## **Արդյունք 1. Աշխատանք սանրող գործիքներով**

### **Թեմա 1.1 Մանրող գործիքների ճանաչում**

Վարսավիրական գործիքները նախատեսված են մազերի հետ տարբեր գործողություններ (կտրում, սանրում, հարդարում և այլն) կատարելու համար: Այդ գործիքները, ըստ իրենց իրականացրած գործողությունների, կարելի է բաժանել չորս հիմնական խմբի.

□ սանրող գործիքներ.

□ կտրող գործիքներ.

□ հարդարող և գանգրացնող գործիքներ.

□ չորացնող գործիքներ:

Վարսավիրական գործիքների ճիշտ և նպատակային օգտագործմամբ է պայմանավորված վարսահարդարի աշխատանքի հաջողությունը: Ուստի նա պետք է քաջատեղյակ լինի վարսավիրական բոլոր գործիքներին, դրանց կիրառման եղանակներին, օգտվելու անվտանգության կանոններին և իրազեկ լինի այդ ասպարեզում ի հայտ եկող բոլոր նորարարություններին: Վարսահարդարը, հմտորեն տիրապետելով վարսավիրական գործիքների կիրառման եղանակներին, կկարողանա իր աշխատանքները կատարել կոկիկ, խնամքով, անվնաս՝ չստեղծելով հաճախորդի համար տհաճ զգացողություններ:

Վարսավիրական գործում օգտագործվող տարբեր էլեկտրասարքավորումներ նախատեսված են ինչպես մազերի կտրման, այնպես էլ չորացման, հարդարման, քիմիական գործընթացն արագացնելու և մազերը գանգրացնելու համար:

Վարսավիրական աշխատանքը պահանջում է հատուկ վերաբերմունք դրսևորել մասնագիտական գործիքների նկատմամբ:

Վարսավիրական տարբեր գործիքների առկայության դեպքում վարսահարդարը հնարավորություն ունի իրականացնելու բազմառոճ աշխատանք:

Մանրերը լինում են մետաղե, փայտե, ոսկրե և պլաստմասե:

Մետաղե սանրերը խստորեն արգելվում է օգտագործել վարսավիրական գործում: Նման սանրերը վնասակար են թաց մազերի համար, քանի որ դրանք դարձնում են փխրուն, դյուրաբեկ և շերտավորված: Այդ իսկ պատճառով վարսավիրի սանրերի հավաքածուում **մետաղյա սանրերը տեղ չունեն:**

**Փայտե սանրերն** անվնաս են մազերի համար, սակայն հարմար չեն վարսավիրական աշխատանքների համար:

**Ոսկրե սանրե թը** բավական թանկ են և հաճախ արտադրվում են որպես զարդ:

**Պլաստմասե սանրերը** ժամանակակից վարսավիրական գործում սանրի ամենատարածված տեսակներից են: Դրանք պատրաստված են բարձրորակ պլաստմասայից, ճկուն են, դիմացկուն և չունեն էլեկտրական անալու հատկություն:

Գոյություն ունեն նաև կաուչուկից պատրաստած սանրեր, որոնք չեն վնասում մազերը, սակայն չափազանց փխրուն են և հաճախակի ջարդվում են:

Ժամանակակից վարսավիրական գործում լայն տարածում են ստացել սիլիկոնե սանրերը, որոնք բավականին դիմացկուն են և բացարձակ անվնաս:

Վարսավիրական սանրերը տարբերվում են սովորական սանրերից: Դրանք ուղիղ են, ձեռքի մեջ չեն սահում, ունեն ընդգծված անկյուններ: Իսկ սովորական սանրերը ձեռքից սահում են, ձվաձև են, սանրելու ընթացքում էլեկտրանանում են:

### **Հարցեր.**

1. Որո՞նք են սանրող գործիքները:

2. Ի՞նչ նյութերից կարող է պատրաստված լինել սանրը:

---

---

---

### **Թեմա 1.2 Մանրող յուրաքանչյուր գործիքի դերը և նշանակությունը**



Ըստ նշանակության բոլոր սանրերը բաժանվում են չորս տեսակի.



**Համակցված սանրեր:** Բաղկացած են խիտ և նոսր ատամներից: Այս տեսակի սանրերը համապիտանի են /ունիվերսալ/: Կարող են օգտագործվել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց




սրահներում (մազերի սանրում, կտրվածք, սառը և տաք հարդարում, մազերի գգում և այլն):

**Միատեսակ ատանաշարով սանրեր:** Այս տեսակի սանրերը լինում են կամ նոսր, կամ խիտ ատամներով: Օգտագործվում են կանանց մազերը սանրելու կամ կտրվածք կատարելու նպատակով:

**Մրածայր պոչով սանրեր:** Այս սանրերը հիմնականում օգտագործվում են մազերը հստակ մազա-



փնջերի բաժանելու նպատակով (եթե հարկավոր է մազերը փաթաթել վարսափաթաթուկի կամ կոկլյուշների վրա): Մրածայր պոչով սանրը չի կարելի օգտագործել մազերի կտրվածքի ժամանակ: Այս սանրերը կիրառվում են նաև հանդիսավոր սանրվածքներ կամ շերտաներկում իրականացնելիս/ շերտերը մեկումեջ առանձնացվում են/:



**Մովորական պոչով և եղանանման սանրեր:** Մրանք օգտագործվում են մազերի հարդարման ժամանակ, օրինակ՝ մազերը զգելու:

Գլխամաշկը մերսելու, մազերը սանրելու և հարդարելու նպատակով օգտագործվում են նաև **խոզանակներ:** Դրանց ատամները կարող են լինել բնական մազերից, մետաղից կամ պլաստմասալից:

Վարսավիրական գործում հիմնականում օգտագործվում են բնական մազեր ունեցող խոզանակներ, քանի որ դրանք հարդարման ժամանակ ավելի լավ են ձգում մազերը և չեն վնասում դրանք: Խոզանակները լինում են երկու տեսակի՝ **հարթ և կլոր:** **Հարթ** խոզանակներն օգտագործվում են գլխամաշկը մերսելու և մազերը հարդարելու նպատակով: Այս սանրերի ատամների ծայրերին կան գնդիկներ, որոնք պաշտպանում են գլխամաշկը վնասվածքներից: **Հարթ** խոզանակների միջոցով վարսահարդարը, մազերը արմատների հատվածում բարձրացնելով, դրանց հաղորդում է ցանկալի ծավալ: Նման սանրի և վարսահարդարիչի միջոցով իրականացրած հարդարումն անվանում են « բոմբաժ»:



**Կլոր** խոզանակներն անվանում են «բրաշինգ»: Դրանք օգտագործվում են հարդարման ընթացքում մազերի ծայրերին ձև հաղորդելու նպատակով: Կլոր սանրով կատարած մազերի հարդարումը նույնպես կոչվում է «բրաշինգ»: Այս տեսակի բոլոր սանրերն ունեն բավականին կոշտ մազատամներ, դատարկ հիմք՝ օդի ազատ հոսքի համար: Խոզանակի մազատամների երկարությունը կարող է լինել տարբեր չափսերի:

**Մանր «Տլատոպեր»:** Այս կարգի սանրերը պատրաստվում են միայն պլաստմասալից: Դրանք բաժանված են, բռնակ-պոչի լայնությունը կարող է լինել մինչև 1 սմ, իսկ ատամների երկարությունը՝ 8-10 սմ: Մանրի հիմքում գտնվող անցքում տեղադրված է հեղուկով լցված ապակյա սրվակ, որը կենտրոնում ունի երկու նիշ: Այն հեղուկով լցված է այնպես, որ օդի մի փոքրիկ մաս մնա: Նպատակն է տեսանելի դարձնել, թե որ անկյան տակ է գտնվում սանրը հատակի համեմատությամբ: Այս սանրն օգտագործվում է այնպիսի սանրվածքների ժամանակ, ինչպիսիք են « բոբ-բիկ», « կառե»: Մանրը խրում ենք մազարմատների մեջ, և մազերը բարձրացնում մինչև տվյալ սանրվածքը պահանջող բարձրությունը: Այս պարագայում կարևոր է, որ օդի պոչակը գտնվի նիշերի կենտրոնում: Այն մազերը, որոնք մնում են սանրի վրա, կտրվում են մկրատով կամ էլեկտրամեքենայով:

**«Մտրայպեր» սանրը** նախատեսված է մազերի ներկման համար: Այս սանրի միջոցով կատարում են տարբեր տեսակի ներկումներ /շերտաներկում, կոլորիրովկա/, հատկապես 25-30 սմ երկարություն ունեցող մազերի համար: «Մտրայպեր» տեսակի սանրն ունի հատուկ ուղղանկյունաձև կցորդ, որի վրա կան երկարավուն անցքեր: Երբ կցորդը հագցվում է սանրին, ապա դրա անցքերը և սանրի ատամները հստակ համընկնում են: Երբ կցորդի վրա քսում են ներկանյութը, այն տեղաբաշխվում է սանրի ատամների վրա՝ որոշակի հեռավորությամբ:

Մանրի ատամները դասավորված են այնպես, որ դրանք մազափունջը թաթախում են ներկա-  
նյութով՝ սեղմելով այն ատամների արանքում՝ բացառելով հարևան մազափնջերի ներկումը:




**Երանգավորման համար նախատեսված սանրեր** Այս սանրերի միջոցով, հատուկ թղթի կամ նրբա-  
թիթեղի օգտագործմամբ, կատարվում են մազերի տարբեր տեսակի երանգավորումներ: Այս տե-  
սակի սանրերն ունեն յուրահատուկ ատամներ՝ ծայրերը եռանկյունանման թեքություն ունեցող  
ծայրերով, ինչն էլ հնարավորություն է տալիս մազերի շերտերը համաչափ փնջերի բաժանելու:  
Մանրերի վրա կարող են տեղադրված լինեն մինչև չորս շարք ատամներ: Յուրաքանչյուր շարքի ա-  
տամներն իրարից դասավորված են 3-10 սմ հեռավորության վրա: Ատամների շարքի ընտրու-  
թյունը կախված է ընտրած երանգավորման տեսակից: Երանգավորումը կարող է կատարվել  
մասամբ կամ ամբողջ գլխի մակերեսով:


**Մանրերը բռնելու տարբերակներ**

Վարսավիրական գործում գոյություն ունեն մկրատ բռնելու հինգ հիմնական և երեք օժանդակ  
տարբերակներ: Հիմնական ձևերն են՝


1. Օգտագործվում է մազերի տաք և սառը




հարդարման ընթացքում: Սառը հարդարման



ժամանակ սանրը բռնում են աջ ձեռքով, իսկ տաք



հարդարման ժամանակ՝ ձախ ձեռքով: Ընդ որում սանրի ատամն էրն ուղղված են դեպի ներքև, բութ մատը և ճկույթը գտնվում են սանրի ներսի




մասում, իսկ ցուցամատը, մի ջնամատը և մատնեմատը՝ դրսի մասում:

2. Կիրառվում է «տուշովկայի» ընթացքում:


Սանրը բռնում են ձախ ձեռքով, ատամները ուղղված են դեպի ներքև: Սանրը տեղադրվում է բութ և ցուցամատի արանքում, ընդորում ցուցամատը գտնվում է ատամների վրա, իսկ բութը՝ հակառակ կողմում: Մյուս մատները պահում են սանրը դրսի կողմից:

3. Կիրառվում է «տուշովկայի» և մազերը զգելու ժամանակ: Սանրը բռնում են ձախ ձեռքով,



ատամներն ուղղված են դեպի ներքև: Բութ մատով բռնում են սանրը ներսի կողմից, ցուցամատով՝ դրսի, մնացած մատները գտնվում են դրսի մասում:

4. Կիրառվում է կտրվածքների ժամանակ՝ մկրատի հետ համատեղ: Սանրը և մկրատը գտնվում են աջ ձեռքում, մկրատի օղակը հագցրած է մատնեմատին, բութ մատը սանրով սեղմում է



մկրատը, իսկ սանրի ատամներն ուղղված են ավից դուրս:


5. Կիրառվում է գործողությունների ընդմիջումների ժամանակ: Սանրը գտնվում է ձախ ձեռքում:

Բութ մատը գտնվում է սանրի ուղղությամբ, ատամներն ուղղված են դեպի մյուս մատները:

Սանրը հարկավոր է բռնել ուղղահայաց դիրքով:

**Սանրերը բռնելու օժանդակ տարբերակները**

Կիրառվում է մազերը սանրելու ժամանակ:



Մանրը գտնվում է աջ ձեռքում՝ ատամները ուղղված են դեպի ներքև, բութ մատը գտնվում է սանրի ներսի մասում: Մնացած մատները գտնվում են սանրի դրսի մասում:

Կիրառվում է մազերը փաթաթելու ժամանակ: Մանրը գտնվում է ձախ ձեռքում, ճկույթը սանրը սեղմում է ավի մեջ, իսկ սանրի ատամներն ուղղված են դեպի մյուս մատները: Կիրառվում է մազերը գգելու ժամանակ: Մանրը գտնվում է աջ ձեռքում, բռունցք արած ձեռքի բութ մատը սեղմում է սանրը, որի ատամներն ուղղված են դեպի վարպետը:

**Հարցեր.**

1. Ի՞նչ աշխատանք է կատարվում համակցված սանրով:

---

---

2. Ի՞նչ աշխատանք է կատարվում միատեսակ ատամնաշար ունեցող սանրով:

---

---

3. Ի՞նչ աշխատանք է կատարվում սրածայր պոչով և եղանանման սանրերով:

---

---

4. Ի՞նչ աշխատանք է կատարվում հարթ և կլոր սանրերով:

---

---

5. Մանրերը բռնելու ինչպիսի՞ տարբերակներ կան:

---

---

**Թեմա 1.3 Մանրող գործիքների կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները**

1. Յուրաքանչյուր հաճախորդից հետո սանրերը ախտահանել ուլտրամանուշակագույն ճառագայթի միջոցով կամ պահել քլորամինի լուծույթի մեջ առնվազն 15 րոպե: Կեղտոտված սանրը լվանալ օձառաջրի մեջ:

2. Հետևել, որ սանրի ատամները լինեն անվնաս, չունենան ճաքեր:

3. Արգելվում է սանրը թողնել համազգեստի գրպանում կամ հաճախորդի մազերի մեջ:

4. Արգելվում է քիմիական նյութերով աշխատելիս օգտագործել մե տաղյա սանրեր:

**Հարցեր.**

1. Ինչպե՞ս է հականեխվում աշխատած սանրը:

---

---

2. Ինչպիսի՞ սանրերով են աշխատում:

---

---

3. Որտե՞ղ է պահվում սանրը:

---

4. Ինչպե՞ս են աշխատում մետաղյա սանրով:

---

---

### **Թեմա 1.4 Սանրող գործիքների օգտագործում**

Վարսավիրական գործում սանրերն օգտագործվում են տարբեր նպատակներով. մազերը կտրվածքից առաջ և կտրվածքի ընթացքում սանրելու, հարդարելու, մազափնջերի բաժանելու, մազերը և գլխամաշկը որակելու, սանրվածքին վերջնական տեսք հաղորդելու նպատակով: Սանրերն առանձնացվում են ըստ երկարության, լայնության և ատամների խտության: Սանրվածքին բազմազան տեսք հաղորդելու գործում շատ կարևոր են սանրի չափերը և դրանց ատամների միջև ընկած հեռավորությունը: Լայն սանրերը հիմնականում օգտագործվում են մեծ մազափնջեր, իսկ փոքրերը, համապատասխանաբար, ավելի փոքր մազափնջեր սանրելու համար: Դրանք կիրառվում են նաև կարճ սանրվածք կատարելու ժամանակ: Որքան մեծ է սանրի ատամների միջև ընկած հեռավորությունը, այնքան թույլ է մազերի ձգումը, իսկ վերջինս էլ նպաստում է մազափնջերի սահմաններն առավել սահուն դարձնելուն: Խիտ և փոքր ատամներով սանրը նպատակահարմար է օգտագործել կարճ և փոքր մազափնջեր սանրելու համար:

#### **Հարցեր.**

1. Որտե՞ղ են սանրող գործիքները:

---

2. Ինչպե՞ս են օգտագործվում սանրող գործիքները մազերի կտրման ժամանակ:

---

3. Մազերի հարդարման ժամանակ ինչպիսի՞ սանրող գործիք է օգտագործվում:

---

4. Մազերի չորացման ժամանակ սանրող գործիքի ինչպիսի՞ տեսակ է օգտագործվում:

---

---


### **Արդյունք 2. Աշխատանք մազերի կտրման գործիքներով**

#### **Թեմա 2.1 Մազերը կտրող գործիքները**

##### **Մազերը կտրող գործիքներից են մկրատները և ածելիները:**


Մկրատները լինում են տարբեր չափերի, ձևերի և պատրաստված են բազմազան նյութերից՝ կերամիկա, պողպատ և այլն: Դրանք կազմված են կտրող երկու զուգահեռ ծայրամասերից և օղականման





բռնակներից, որոնք կառավարվում են բթամատով և միջնամատով: Մկրատի երկու մասերը շարժական են և միացված են տափօղակով: Որոշ մկրատներ մատների համար ունեն շարժական և անշարժ հենարաններ: Մկրատի ընտրությունը կախված է պահանջված արդյունքից: Նպատակա հարմար է ունենալ լավ որակի մկրատներ, քանի որ դրանք չեն պահանջում հաճախակի սրում, ծառայում են երկար ու արդյունավետ: **Մկրատը բաղկացած է երեք մասերից՝** երկու միանման կե սերից և դրանք ամրացնող պտուտակից:

Մկրատի միանման մասերը




կազմված են՝

1. օղակներից
2. լծակներից
3. աշխատող մասից
4. սուր կտրող մասից
5. ծայրերի

### Ածելիներ

Վարսավիրական գործում օգտագործվում են երկու տեսակի ածելիներ՝ վտանգավոր և ֆիլիբրովային:



**Հարցեր.**

Որո՞նք են մազերը կտրող գործիքները:


---

Ներկայացնել կտրող գործիքների կառուցվածքը:

---

---

**Թեմա 2.2 Կտրող յուրաքանչյուր գործիքի դերը ու նշանակությունը**



Վարսավիրական մկրատները լինում են երկու տեսակի՝

- 1. ուղիղ
- 2. ֆիլիրովային

**Ուղիղ մկրատ**


**Ֆիլիրովային մկրատներ**

Այս մկրատները օգտագործվում են «ֆիլիրովկա» և «տուշովկա» կատարելու նպատակով: Մկրատ




ները հնարավորություն


են տալիս հավասարաչափ հերթագայելու երկար և կարճ մազերի կտրումը: Ֆիլիրովային մկրատները լինում են երկու տեսակի՝ միակողմանի և երկկողմանի: Երկկողմանի ֆիլիրովային մկրատների ատամները տեղադրված են կտրվող մակերեսի մի կողմում, իսկ երկկողմանի մկրատինը՝ երկու կողմերում: Միակողմանի մկրատները կտրում են ավելի շատ մազեր, քան երկկողմանիները:



Աշխատելու ընթացքում ֆիլիրովային մկրատը պետք է բռնել աջ ձեռքի առաջին ֆալանգների վրա, ընդ որում՝ բուխ մատը գտնվում է ներքևի օղակի մեջ, իսկ մատնեմատը վերևի օղակում: Ցուցամատը և միջնամատը գտնվում են մկրատի վրա: Աշխատում է միայն բուխ մա տը: Ածելին հնարավորություն է տալիս մազերի ծայրերի հաստ շերտի եզրագիծը նրբացնելու:



Սովորական ածելիները նախատեսված են ինչպես դեմքը և գլուխը սափրելու, այնպես էլ մազերի կտրվածք և ֆիլիրովկա կատարելու համար: Սովորական ածելիները լինում են դասական,



շարժական/ փոփոխվող սրածայրով/։ Ֆիլիրովային ածելին նախատեսված է միայն մազերը կտրելու և ֆիլիրովկայի համար: Այն բաղկացած է հետևյալ հիմնական մասերից.

- բռնակ
- ատամնակիր ապահովիչ
- սրաեզր (лезвие)
- ամրացնող պտուտակ

Ածելիի բոլոր մասերը կարող են պատրաստված լինեն մետաղից կամ պլաստմասայից: Հաճախ օգտագործվում են համակցված տարբերակները՝ մետաղ և պլաստմասա: Ատամնակիր ապահովիչը յուրաքանչյուր կողմում ունի 7-9 ատամ, որոնք կարող են լինել ուղիղ և շեղ: Ատամնակիր ապահովիչի լայնությունը ատամների հետ միասին 6-8 սմ-ով ավելի է, քան սրաեզր մասինը: Ատամնակիր ապահովիչի դուրս եկած ատամներն ածելին դարձնում են ավելի անվտանգ: Կիրառվում են ածելիի համակցված տարբերակները. փոփոխ վում են հավելյալ կցորդները:

**Ածելին բռնելու տարբե րակները**

Գոյություն ունի ածելին բռնելու երկու տարբերակ՝

1. Ածելին գտնվում է աջ ձեռքում, սուր կտրող եզրը ուղղված է դեպի ներքև, բռնակ -պատյանը՝ դեպի վերև: Ճկույթը գտնվում է պոչիկի վրա, բուխ մատը՝ կրունկանման մասին է հենվում, իսկ ցուցամատը, միջնամատը և մատնեմատը գտնվում են ակոսով վզիկի վրա:

2. Ածելին գտնվում է աջ ձեռքում, ընդ որում՝ կտրող եզրը ուղղված է դեպի վերև, իսկ բռնակ-պատյանը՝ ներքև: Ճկույթը գտնվում է պոչիկի տակ, բութ մատը գտնվում է ակոսով վզիկի ներսի մասում, իսկ ցուցամատը, միջնամատը և մատնեմատը՝ դրսի:

**Վարսավիրական գործում օգտագործվում է «Մարտկոցային» մեքենան, որն ունի հետևյալ կառուցվածքը՝**



1. պլաստմասե հիմնապատյան
2. գլխիկ
3. սնուցող լար
4. անջատիչ (պատյանի կամ գլխիկի վրա)

Այս մեքենաներն ավելի նպատակահարմար են, որովհետև կարող են աշխատել ինչպես էլեկտրական հոսանքով, այնպես էլ՝ մարտկոցով:

Մեքենան բռնելու հատուկ ձև չունի: Ավելի հաճախ այն բռնում են հիմնապատյանից, ընդ որում՝ բութ մատը գտնվում է մեքենայի գլխիկի վրա:

Մազերը կտրելու ժամանակ մեքենայի դանակի ատամները պետք է ուղղված լինեն դեպի վերև, իսկ եզրագծով կտրում (օկանտոժ) կատարելու ընթացքում՝ ներքև:

### **Հարցեր.**

1.Ի՞նչ աշխատանք է կատարվում մկրատի օգնությամբ:

---

---

2.Ի՞նչ աշխատանք է կատարվում ածելիի օգնությամբ:

---

---

3.Ի՞նչ աշխատանք է կատարվում մարտկոցով մեքենայի օգնությամբ

---

---

### **Թեմա 2.3 Կտրող գործիքների գործածումը**

Անվտանգության տեխնիկայի կանոններ

Մկրատով աշխատելու անվտանգության կանոնները

10

1. Յուրաքանչյուր հաճախորդից հետո մկրատները ախտահանել ուլտրամանուշակագույն ճառագայթով կամ սպիրտով:

2. Մկրատները պետք է պահել պատյանի մեջ, պահարանի վերնի դարակում:

3. Մկրատն իրար փոխանցել փակ վիճակում՝ բռնելով աշխատող մասից, օղակներն առաջ:

4. Մկրատներն անհրաժեշտ է օգտագործել ըստ նշանակության:
5. Պետք չէ մկրատն ընկնելիս բռնել. կարող եք վնասվել:

Ածելիով աշխատելու անվտանգության կանոնները:

1. Յուրաքանչյուր հաճախորդից հետո ածելիներն ախտահասանել ուլտրամանուշակագույն ճառագայթով կամ սպիրտով: Բացի այդ՝ անհրաժեշտ է փոխել սրագրը:
2. Ածելիները պետք է պահել պատյանի մեջ, պահարանի վերնի դարակում:
3. Ածելին փոխանցում են իրար փակ վիճակում, պատյանի մեջ:
4. Սափրելու ընթացքում պետք է հետևել, որ ածելիի գլխիկը ուղղված լինի գլխի և դեմքի դուրս ցցված մասերին:
5. Ածելիով աշխատելու ժամանակ պետք է լինել չափազանց ուշադիր:  
Չի կարելի թափահարելով գործիքը խոսել հաճախորդի հետ:
6. Յուրաքանչյուր հաճախորդին սպասարկելուց հետո պետք է փոխել ֆիլիրովային ածելիի սրածայրը, իսկ պլաստմասե մասերը ախտահանել ուլտրամանուշակագույն ճառագայթով կամ պահել քլորամինի լուծույթի մեջ՝ առնվազն 15 րոպե:
7. Ախտահանելուց հետո ածելին լավ չորացնել՝ բացառելով պատյանում խոնավոթյան առկայությունը:

**Մազ կտրող մեքենայով աշխատելու անվտանգության կանոնները:**

1. Էլեկտրացանցին միացնելուց առաջ անհրաժեշտ է ստուգել սնուցող լարը: Այն չպետք է ունենա վնասված, ոլորված, ծոված մասեր:
2. Մեքենայի շարժական դանակները փոխում են միայն էլեկտրացանցից անջատված վիճակում:
3. Արգելվում է մեքենան բռնել թաց ձեռքերով և կտրել թաց մազեր:
4. Արգելվում է մեքենան պահել պահարանի դարակում (էլեկտրալարը չվնասելու նպատակով): Այն պետք է պահել կախված վիճակում՝ աշխատանքային սեղանի մոտ:

**Հարցեր.**

1. Ինչպե՞ս է գործածվում մկրատը:

---



---

2. Ինչպե՞ս է գործածվում ածելին:

---



---

3. Ինչպե՞ս է գործածվում մարտկոցային մեքենան:

---



---

**Արդյունք3. Աշխատանք չորացնող գործիքներով  
Թեմա3.1 Մազերը չորացնող գործիքներ**



Վարսահարդարի չ

Վարսարդուկ

**Վարսավիրանցում օգտագործվող էլեկտրասարքեր**

Ներկա ժամանակներում վարսավիրական սրահներում օգտագործվում են երեք հիմնական տեսակի էլեկտրական սարքեր՝ « Սուշուար» (сушар), «Կլիմազոն» (климазон) և «Ինֆրաջեռակ» (инфракраска):

**Սուշուար:** Այս սարքն օգտագործվում է մազերի չորացման համար:

11



Գոյություն ունեն տարբեր մոդելներ՝ պատին ամրացվող, անիվների վրա՝ շարժական, աշխատանքային տեղում ամրացված: Բոլորն էլ ունեն նույն կառուցվածքը:

**Կլիմազոն:** Այս սարքը արագացնում է քիմիական գործընթացները՝ մազերի ներկման և քիմիական զանգրացման ժամանակ: Սարգի աշխատանքները կարգավորում է համակարգիչը, որը հնարավորություն է տալիս ընտրելու առավել ճիշտ տաքացնող ջերմաստիճան՝ օգտագործվող տվյալ նյութին, հաճախորդի մազերի տեսակին և կառուցվածքին՝ համապատասխան:



**Ինֆրաջեռակ:** Այս սարքը էլեկտրոնային ինֆրակարմիր գլխարկ է, որը կատարյալ է մազերի ընդհանուր ներկման, գունաթափման, ներկի հեռացման գործընթացի համար:



**Հարցեր.**

Որո՞նք են մազերը չորացնող գործիքները:

---

Ներկայացնել վարսահարդարիչի աշխատանքը:

---

Ներկայացնել վարսարդուկի աշխատանքը:

---

Ներկայացնել սուշուարի, կլիմազոնի և ինֆրաջեռակի աշխատանքները:

---

### 3.2 Համապատասխան չորացնող գործիքի ընտրություն

#### Գործնական աշխատանքներ.

1. Կատարել մազերի չորացում վարսահարդարիչով: 12
2. Կատարել մազերի չորացում վարսաարդուկով:
3. Կատարել մազերի չորացում սուշուարով:
4. Օգտվելով կլիմագոնից կատարել համապատասխան աշխատանքը:
5. Ինֆրաջեռակի միջոցով կատարել չորացում:

#### Թեմա 3.3 Գործիքի աշխատանքային ռեժիմի ընտրումը և կարգավորումը

Վարսահարդարիչները և վարսաարդուկները օգտագործվում են մազերի չորացման, հարդարման ժամանակ: Նրանց աշխատանքային ռեժիմը ընտրվում է կախված աշխատանքից: Մազերի չորացման համար հարկավոր է ընտրել ցածր ջերմաստիճանի ռեժիմը՝ մազերը չվնասելու համար: Իսկ հարդարման աշխատանքներ իրականացնելիս ջերմաստիճանը բարձր է և կարգավորվում է ըստ պահանջի:

Մազերի չորացումը սուշուարով կատարվում է մեքենայի ջերմակարգավորիչի միջոցով: Չորացնող գլխիկի վրա տեղավորված է ջերմակարգավորիչը (20-70 °C) և ժամանակը ցույց տվող ռելե: Մարքավորման ջերմակարգավորիչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր հաճախորդի համար ընտրել և՛ անհատական ժամանակ, և՛ ջերմաստիճան:

«Կլիմագոն» սարքի աշխատանքները կարգավորում է համակարգիչը, որը հնարավորություն է տալիս ընտրելու առավել ճիշտ տաքացնող ջերմաստիճան՝ օգտագործվող տվյալ նյութին, հաճախորդի մազերի տեսակին և կառուցվածքին համապատասխան:

Ինֆրաջեռակը հազեցված է հատուկ գեներատորներով, որոնք ճառագայթում են էներգիայի մեծ ալիքներ: Դրանք առանց բարձր ջերմաստիճանի նպաստում են քիմիական նյութերի ներթափանցմանը: Մարքը հնարավորություն է տալիս այդ գործընթացը կազմակերպել գլխամաշկի և մազերի համար առավել անվնաս: Ինչպես «Սուշուարը», «Ինֆրաջեռակը» ևս կարող է ամրանալ պատին կամ ունենալ անիվներ:

Չորացնող գործիքնորով աշխատելիս հարկավոր է պահպանել էլեկտրասարքերի հետ աշխատելու անվտանգության կանոնները.

1. Նախքան էլեկտրասարքերի միացնելը՝ անհրաժեշտ է ստուգել լարերի վիճակը և հողակցումը:
2. Խստիվ արգելվում է էլեկտրասարքերը միացնել թաց ձեռքերով:
3. Արգելվում է օգտագործել էլեկտրասարքեր, որոնք չունեն պաշտպանիչ ցանցեր:
4. Նախքան հաճախորդին կառաջարկել նստել «Սուշուարի» տակ, անհրաժեշտ է փաթաթած մազերին հագցնել հատուկ այդ նպատակի համար նախատեսված ցանց:

#### Հարցեր.

1. Ինչպիսի՞ աշխատանքային ռեժիմ է հարկավոր ընտրել վարսահարդարիչով մազերը չորացնելու համար:

---

2. Ինչպիսի՞ աշխատանքային ռեժիմ է հարկավոր ընտրել վարսահարդարիչով մազերը հարդարելու համար:

---

3. Ինչպիսի՞ աշխատանքային ռեժիմ է հարկավոր ընտրել «Սուշուարը» մազերը չորացնելու համար:

---

4. Ինչպե՞ս է կարգավորվում «Կլիմագոն» սարքի աշխատանքը:

---

5. Ինչպիսի՞ աշխատանքային ռեժիմ է հարկավոր ընտրել «Ինֆրաջեռակը» օգտագործելու համար:

---

### **Թեմա 3.4 Աշխատանք չորացնող գործիքներով**

Անվտանգության տեխնիկայի կանոնները

Չորացնող գործիքներով աշխատանքը կատարվում է մազերը չորացնելու, հարդարելու համար: Հարկավոր է պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները:

1. Նախքան էլեկտրասարքերի միացնելը՝ անհրաժեշտ է ստուգել լարերի վիճակը և հողակցումը:
2. Խստիվ արգելվում է էլեկտրասարքերը միացնել թաց ձեռքերով:
3. Արգելվում է օգտագործել էլեկտրասարքեր, որոնք չունեն պաշտպանիչ ցանցեր: 13
4. Նախքան հաճախորդին կառաջարկել նստել «Սուշուարի» տակ, անհրաժեշտ է փաթաթած մազերին հագցնել հատուկ այդ նպատակի համար նախատեսված ցանց:

### **Հարցեր.**

1. Կարելի՞ է թաց ձեռքերով աշխատել էլեկտրական սարքավորումներով: \_\_\_\_\_
  2. Ինչպիսի՞ կանոններ պետք է պահպանել «Սուշուար»-ով աշխատելիս:
- 

3. Կատարել չորացում վարսահարդարիչով:

### **Արդյունք 4. Աշխատանք գանգրացնող գործիքներով**

#### **Թեմա 4.1 Մազերը գանգրացնող գործիքներ**

Մազերը գանգրացման գործիքներից են. վարսափաթաթուկը (бигуди), էլեկտրափաթաթուկը (щипцы), վարսահարդարիչը (фен), վարսարդուկը:

### **Գործնական աշխատանք**

Տարբերել մազերը գանգրացնող գործիքները և ներկայացնել յուրաքանչյուր գործիքի գործածումը:

### **Թեմա 4.2 Գանգրացնող յուրաքանչյուր գործիքի դերն ու նշանակությունը**

Մազերի հարդարման, այսինքն՝ սանրվածքների մեջ ժամանակավոր կառուցվածքային փոփոխություն կատարելու նպատակով օգտագործվում են տարբեր գործիքներ, սարքավորումներ՝ վարսափաթաթուկ (бигуди), էլեկտրափաթաթուկ (щипцы), վարսահարդարիչ (фен), վարսարդուկ:

#### **Վարսափաթաթուկ**

Վարսավիրական գործում օգտագործվում են հետևյալ վարսափաթաթուկները՝

1. Մետաղյա վարսափաթաթուկ՝ առանց ձողափայտի, ճկուն ժապավենով կամ վարսամրակով: Մրանց կիրառմամբ հնարավոր է ստանալ խոշոր խոպոպիկներ՝ առանց մազերը «ջարդելու»: Օգտագործվում են առօրյա և տոնական հարդարումների նպատակով:
2. Պլաստմասե փշիկներով վարսափաթաթուկ կամ «ոգնի»: Հնարավորություն է տալիս ստանալու նուրբ խոպոպիկներ / նույնը ստանում են նաև վարսահարդարիչի օգնությամբ/: Այն օգտագործվում է առօրյա, տոնական և մոդելային հարդարումների ժամանակ: Նման վարսափաթաթուկները հնարավորություն են տալիս մազերը ձգելով՝ փաթաթել՝ տարբեր առաձգականության խոպոպիկներ ստանալու նպատակով:
3. Ձևափոխված վարսափաթաթուկ: Այս խմբին են պատկանում կաչուն (липычка) վարսափաթաթուկները, որոնք մազերի վրա մնում են առանց ճկուն ժապավենի, վարսամրակի կամ սեղմիչի միջոցով: Օգտագործվում են առօրյա և երեկոյան սանրվածքներ ստանալու նպատակով:



4. Մետաղյա վարսափաթաթուկներ: Մրանք ներսում ունեն վարազի մազից պատրաստված մազաշերտ, որը նախատեսված է մազերը ֆիքսելու և արմատների մոտ բարձրացնելու նպատակով:
5. Բումերանգ-վարսափաթաթուկներ (папильотки): Ճկուն ռետինե փաթաթուկներ են, որոնք նախատեսված են ժամանակակից սանրվածքների և քիմիական գանգրացման համար: Ճկուն բումերանգ-վարսափաթաթուկների կիրառման արդյունքում ստանում են ծավալուն խոպոպիկներ:

**Էլեկտրափաթաթուկներ (щипцы)**



Էլեկտրափաթաթուկներն օգտագործվում են մի - այն խոպոպներ ստանալու նպատակով: Դրանք տարբերվում են իրենց տրամագծերով: Մեր ժամանակներում գոյություն ունեն տարբեր ձևերի էլեկտրափաթաթուկներ: Եռանկյունանման փաթաթուկներն ունեն եռանկյունաձև սեղմիչ, որը հնարավորություն է տալիս ձևավորելու խոպոպիկներ, որոնք մազերի ծայրերում ունենում են կտրուկ ձևափոխումներ և մնում են ուղիղ:

Պարուրաձև փաթաթուկներն ունեն մետաղյա պարույր, որը պտտվելով փաթաթուկի շուրջը՝ թույլ չի տալիս, որ խոպոպիկները խառնվեն: Օգտագործելով պարուրաձև կոկլյուշներ՝ ստացվում են պարուրաձև խոպոպիկներ:

Զիգզագ փաթաթուկներ՝ հնարավորություն են տալիս ստանալու հստակ ընդգծված խոպոպիկ՝ ծոված, կոտրված ծայրով:

**Էլեկտրափաթաթուկ «Վելվմեյկեր»/Вэйвмэйкер/:** Մա նման է սովորական փաթաթուկի, սակայն տաքացնող մակերեսը ակոսավոր է, ինչն էլ հնարավորություն է տալիս ստանալու համապատասխան չափերի հստակ ալիքներ:

**Հարցեր.**

1. Ինչպիսի՞ աշխատանք է կատարում էլեկտրափաթաթուկը:

---

2. Ինչպիսի՞ աշխատանք է կատարում « ոգնին»:

---

3. Ինչպիսի՞ աշխատանք են կատարում զիգզագ փաթաթուկները:

---

4. Ինչպիսի՞ աշխատանք է կատարում «Վելվմեյկեր»-ը:

---

**Թեմա 4.3 Մազերի փաթաթման տեխնիկաների կիրառում**

**Անվտանգության տեխնիկայի կանոններ**

**Թեմա 4.4 Մազերից գանգրացնող գործիքի ճիշտ ու անվտանգ հեռացումը՝ հետևելով անվտանգության տեխնիկայի կանոններին**

Էլեկտրափաթաթուկով աշխատելու տեխնիկան.

Մազերը գանգրացնում են ոչ միայն վարսափաթաթուկի, այլև էլեկտրափաթաթուկի միջոցով: Էլեկտրափաթաթուկի միջոցով գանգրացված մազերն իրենց տեսքով տարբերվում են այլ գործիքների օգնությամբ գանգրացված մազերից: Էլեկտրափաթաթուկով աշխատելիս մազերը պետք է լինեն չոր վիճակում՝ ի տարբերություն սովորական վարսափաթաթուկի, որի ժամանակ աշխատանքն իրականացվում է թաց մազերով: Եթե մազերը գանգուր կամ անհարթ են, ապա կարիք կա դրանք նախապես հարդարելու: Մասնագիտական էլեկտրափաթաթուկը հնարավորություն է տալիս կարգավորելու ջերմությունը: Այսինքն՝ սարքի ցանկալի ջերմաստիճանն /180°C-220°C/ը նստում է վարսա հարդարը:

Ժամանակակից էլեկտրափաթաթուկները պատված են կերամիկական ծածկույթով՝ մազը չվնասելու նպատակով:

Էլեկտրափաթաթուկով աշխատանքն սկսում են, եթե մազերն արդեն չոր են: Կատարվում է մազաբաժանում: Մանր մազափնջերը վերցնում են և տեղադրում էլեկտրափաթաթուկի հիմքին՝ սկսած մազափնջի մազարմատից: Այնուհետև մազափունջը բռնում են ծայրից և փաթաթում մինչև վերջ: Մի քանի վայրկյան թողնում են, որպեսզի մազափունջը հասցնի գանգրանալ, ապա քանդում: Սկզբում քանդում են մի երկու մազափունջ՝ ստուգելու համար արդյոք գանգուրներն ստացվել են, հետո՝ բոլոր մազափնջերը: Գանգուրները ֆիքսելու համար օգտագործում են լաք: Գանգուրների խոշորությունը կախված է էլեկտրափաթաթուկի ձողերի հաստությունից, որքան դրանք հաստ են, այնքան գանգուրները խոշոր են ստացվում: Նոսր մազերը գանգրացնելուց հետո՝ դրանք կարելի է սանրել՝ ավելի փարթամ տեսք տալու համար, իսկ եթե ունենք շատ խիտ մազեր, ապա գանգուրները թողնում են իրենց նախնական տեսքով: Գանգրացված մազերին տարբեր արքեստուարների միջոցով հաղորդվում է հանդիսավոր տեսք: Պարտադիր չէ էլեկտրափաթաթուկով մազերը գանգրացնել ամբողջ երկարությամբ. կարելի է գանգրացնել միայն մազերի եզրերը կամ մազերի որոշ հատվածներ:

Վարսափաթաթուկներ քիմիական գանգրացման համար՝ կոկլյուշներ/«КОКЛЮШКИ»/: 15


Մրանք հնարավորություն են տալիս երկար ժամանակով/առնվազն 3 ամսով/ փոխել մազերի կառուցվածքը: Դրանք լինում են դասական և ձևափոխված: Դասական կոկլյուշներն ունեն պլաստ մասե ձողեր, որոնք նեղանում են կենտրոնում և աստիճանաբար լայնանում դեպի ծայրերը: Գանգրացման ընթացքում այս տեսակի փաթաթուկը հնարավորություն է տալիս ստանալու առավել մանր խոպոպիկներ մազերի ծայրերին և ավելի խոշոր՝ արմատների մոտ:

Գոյություն ունեն նաև ալիքանման մակերես ունեցող, ուղիղ, դասական փաթաթուկներ, որոնք հնարավորություն են տալիս ստանալու առավել բնական խոպոպիկներ:

Դասական փաթաթուկներն իրարից տարբերվում են նաև իրենց տրամագծերով, որքան մեծ է տրամագիծը, այնքան ծավալուն և թեթև է ստացվում խոպոպիկը: Փաթաթուկները տարբերվում են իրարից նաև գույներով:



Ձևափոխված կոկլյուշներ / տե՛ս վերևում/:



Մազերը հարդարող և գանգրացնող գործիքների հետ աշխատելու անվտանգության կանոնները.

1. Գործիքներն անհրաժեշտ է կանոնավոր ախտահանել, կեղտոտվելու դեպքում՝ լվանալ օձառաջրի մեջ:
2. Էլեկտրափաթաթուկի տաքացման աստիճանը ստուգել սպիտակ թղթի միջոցով:

3. Էլեկտրափաթաթուկն իրար փոխանցել՝ բռնելով բռնակից:
4. Վարսահարդարիչը միացնելուց առաջ հարկավոր է ստուգել էլեկտրալարերը:
5. Չի կարելի վարսահարդարիչը վերցնել թաց ձեռքերով:
6. Չի կարելի վարսահարդարիչը պահել զարդասեղանի դարակում:
7. Արգելվում է ինքնուրույն քանդել վարսահարդարիչը:

**Հարցեր.**

1.Թվարկել փաթաթուկներով աշխատելու անվտավգության տեխնիկայի կանոնները:

---



---

2.Կատարել մագերի գանգրացում և էլեկտրափաթաթուկից մագափնջերի հեռացում:

---



---

**Արդյունք5.Սարքավորումների պարզ սպասարկում**

**Թեմա5.1Վարսավիրական գործում օգտագործվող գործիք-սարքավորումների հիմնական կառուցվածքը և հիմնական անսարքությունները**

Վարսավիրական գործում օգտագործվում են մեխանիկական և էլեկտրական սարքավորումներ: **Մեխանիկական** սարքավորումներից են մկրատների տեսակները և ածելիները:

**Էլեկտրական** սարքավորումներից են վարսահարդարները,

վարսաարդուկները, էլեկտրափաթաթուկները, սուշուարները, կլիմագոնները և այլն:

Բոլոր սարքավորումներով աշխատելիս հարկավոր է պահպանել անվտանգության կանոնները, հիգիենայի և սանիտարիայի պահպանման նորմերը, գործիքների խնամքը /ժամանակին յուղել, հետևել գործիքի աշխատունակությանը, մկրատները ժամանակ առ ժամանակ յուղել, վարսահարդարիչի նեքին մաքրում կատարել փոշուց, վարսաարդուկի մակերևույթը անվնաս և մաքուր պահպանել, հետևել էլեկտրական լարերի անվնաս լինելուն, պլաստմասե հիմնապատյանի ամբողջականությանը /:

Այս պայմանները խախտվելու պարագայում անհրաժեշտ է խափանված գործիք-սարքավորումներով չաշխատել/փոխել կամ վերանորոգել / , նորը վերցնել և այնուհետև աշխատքը շարունակել նոր գործիքով:

**Հարցեր.**

Որո՞նք են վարսավիրական գործում օգտագործվող գործիք-սարքավորումների հիմնական կառուցվածքը և հնարավոր անսարքությունները:

---



---

**Թեմա5.2 Սարքավորումների պարզ սպասարկում**

**Գործնական աշխատանքներ**

1. Միացնել վարսահարդարիչը և կարգավորել՝ ըստ պահանջվող աշխատանքի:
2. Միացնել վարսաարդուկը և կարգավորել՝ ըստ պահանջվող աշխատանքի:
3. Միացնել էլեկտրափաթաթուկը և կարգավորել՝ ըստ պահանջվող աշխատանքի:
4. Միացնել մարտկոցային մեքենան և կարգավորել՝ ըստ պահանջվող աշխատանքի:
5. Միացնել «Սուշուարը» և կարգավորել՝ ըստ պահանջվող աշխատանքի:
6. Միացնել «Կլիմագոնը»:
7. Միացնել «Ինֆրաջեռակը»: